ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ARMENIAN NATIONAL
AGRARIAN UNIVERSITY
FOUNDATION

ՀՀ, Երևան, 0009, Տերյան 74
Հեռ.՝ (+374 10) 58 19 12
Էլ. փոստ՝ info@anau.am
www.anau.am

74 Teryan Str., 0009, Yerevan, RA
Tel: (+374 10) 58 19 12
E-mail: info@anau.am
www.anau.am

«14» 01 2025թ.

№ 41/02-10

«ՀԵԼԻՈՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ
/ՀՀ, ք. Երևան, Նանսենի փ., 15շ., 29 բն., հեռ.՝ +37495543078, էլ.հասցե՝ bagratyanr@bk.ru/

Հարգելի՛ պարոն Մանուչարյան,

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի /այսուհետ նաև՝ Հիմնադրամ/ կարիքների համար 2024 թվականի ապրիլի 03-ին հայտարարված քիմիական նյութերի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/50 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում 3-րդ, 5-րդ, 11-րդ, 16-րդ, 18-րդ, 20-րդ չափաբաժինների մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «Հելիոն» ՍՊԸ-ն, որի հետ 07.05.2024թ. կնքվել է ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/50-2 ծածկագրով ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Սակայն 26.12.2024թ. Ձեր կողմից ներկայացված գրությամբ՝ տեղեկացել ենք, որ 11-րդ չափաբաժնի մասով ապրանքը չի կարող մատակարարվել, քանի որ ապրանքի արտադրությունը ժամանակավորապես դադարեցված է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ «Հելիոն» ՍՊԸ-ի հետ կնքված ապրանքի մատակարարման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/50-2 ծածկագրով պայմանագիրը 11-րդ չափաբաժնի մասով 14.01.2025թ. միակողմանի լուծվել է:

Հիմք ընդունելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև 2025թ. հունվարի 29-ը ներառյալ, ապահովել ներկայացված

տուժանքների, մասնավորապես 11-րդ չափաբաժնի մասով ՝ որակավորման ապահովման մասով՝ 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով և պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամի չափով, վճարների գանձումը:

Վերոնշյալի վերաբերյալ Հիմնադրամը դիմել է Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Հիմնադրամը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՌԵԿՏՈՐԻ Պ/Կ՝ Հ. ՋԱՔՈՅԱՆ

Կատարող՝ Ե. Հարությունյան
հեռ. 012521608